ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-360-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2018.07.04/52(1410) Հոդ.794	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	13.06.2018
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	28.06.2018
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	14.07.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի հունիսի 13-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 4-րդ կետը «- հողերի ընթացիկ հաշվառումը,» բառերից հետո լրացնել «- ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգումը,» բառերով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին հոդվածով.

«Հոդված 6.1. Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը

1. Ցամաքային տարածքի ծածկույթը երկրի մակերևույթի դիտարկելի կենսաֆիզիկական ծածկույթն է:
2. Ցամաքային տարածքի ծածկույթը դասակարգվում է՝
1) մշակովի հողեր՝ հողեր, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման համար, ընդգրկում են հողային ֆոնդի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը և բազմամյա տնկարկները, բնակավայրի հողերից՝ տնամերձ և այգեգործական հողերը՝ մասնակի, անտառային հողերից՝ վարելահողերը.
2) մարգագետիններ՝ ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է տարախոտային բուսականությամբ, ընդգրկում են հողային ֆոնդի գյուղատնտեսական նշանակության հողերից՝ խոտհարքները, արոտավայրերը, այլ հողատեսքերը՝ մասնակի, բնակավայրերի հողերից՝ խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման հողերը՝ մասնակի, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի, հատուկ նշանակության հողերը՝ մասնակի, անտառային հողերից՝ խոտհարքները, արոտները, այլ հողերը՝ մասնակի.
3) ծառածածկ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է ծառային բուսականությամբ, ընդգրկում են հողային ֆոնդի հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի և անտառային հողերից՝ անտառները.
4) թփուտապատ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է թփային բուսականությամբ, ընդգրկում են հողային ֆոնդի հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի և անտառային հողերից՝ թփուտները.
5) ջրածածկ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը զբաղեցված է ջրային օբյեկտներով (գետեր, բնական և արհեստական ջրամբարներ ու լճեր), ընդգրկում են հողային ֆոնդի ջրային հողերը՝ մասնակի և հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի.
6) բուսականությունից զուրկ տարածքներ՝ ընդգրկում են հողային ֆոնդի գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը՝ մասնակի, բնակավայրերի հողերից՝ տնամերձ և այգեգործական հողերը՝ մասնակի, խառը կառուցապատման և ընդհանուր օգտագործման հողերը՝ մասնակի, հասարակական և այլ հողերը՝ մասնակի,

արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի, հատուկ նշանակության հողերը՝ մասնակի, անտառային նշանակության այլ հողերը՝ մասնակի, ջրային հողերը՝ մասնակի, պահուստային հողերը:

3. Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 36-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-5.3-րդ մասերով.

«5.1. Հողագրունտը երկրի մակերևույթը ծածկող հողի շերտ է, որը չի ներառում օգտակար հանածոներ և հողի բերրի շերտ:

5.2. Հողագրունտի հանույթի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5.3. Օգտակար հանածոյի հանույթի նպատակով տարբեր նշանակության հողերի մեկանգամյա օգտագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հանրապետության նախագահ

Ա. Սարգսյան

2018 թ. հունիսի 28
Երևան
ՀՕ-360-Ն